Գավառի պետական համալսարանում կրթության որակի ապահովման համեմատական վերլուծություն (բենչմարքինգ)՝ ըստ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների /ԵՉՈՒ/ համապատասխանության և կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակների, խնդիրների և գործընթացների

հ/հ	Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղենիշներ	ԳՊՀ որակի ներքին ապահովման չափանիշների համապատասխանությունը ԵՉՈՒ-ին
1.	**Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ.** **Չափորոշիչ.** Հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրա հետ առնչվող գործընթացներ: **Ուղենիշներ.** **Քաղաքականությունը պետք է ներառի՝** 1. Հաստատություններում հետազոտական աշխատանքի և ուսուցման միջև կապը, 2. Որակի և չափորոշիչների վերաբերյալ հաստատության ռազմավարությունը, 3. Որակի ապահովման համակարգի կազմակերպումը, 4. Որակի ապահովման համար բաժինների, կրթական հաստատությունների, անձնակազմի և այլ կազմակերպական միավորների ու անհատների պատասխանատվությունը, 5. Որակի ապահովման գործընթացի մեջ ուսանողների ներգրավումը, 6. Քաղաքականության ներդրման, իրականացման, մշտադիտարկման /մոնիթորինգի/ և վերլուծության եղանակները:	Գավառի պետական համալսարանը /ԳՊՀ/, ԵՉՈՒ «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ» բաղադրիչի չափորոշչի և նույն կետի ուղենիշների 6-րդ ենթակետի համաձայն, մշակել է որակի ներքին ապահովման /ՈՆԱ/ քաղաքականություն՝ հստակ սահմանված նպատակներով և նպատակներից բխող խնդիրներով: ԳՊՀ-ի կրթության որակի ապահովման ձեռնարկում ‹‹ՈՆԱ քաղաքականության նպատակներ›› հատվածում ամրագրված է, որ Համալսարանը երաշխավորում է որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը ԳՊՀ առաքելությանը, ռազմավարական նպատակներին: ԵՉՈՒ «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ» բաղադրիչի ուղենիշների 1-ին և 2-րդ կետերին համապատասխան, ԳՊՀ-ը 2017-2022թթ. հնգամյա ռազմավարական ծրագրում ամրագրել է 9-ը զարգացման ուղղություններ, որոնցից առաջին երկուսը վերաբերում են ուսումնական գործընթացի որակի բարելավմանը և կրթության և գիտահետազոտության ինտեգրմանը: ԳՊՀ-ում որպես առաջնահերթություն հռչակված են կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական, գիտահետազոտական, դաստիարակչական միջավայրի ապահովումը, որակի մշակույթի ձևավորումը: Այսպիսով, **<u>Համալսարանի գործունեության առանցքային ուղղությունն է որակի ներքին ապահովումը, որը բնութագրվում է որպես համապատասխանություն բուհի առաքելությանը և նպատակին:</u>** ԵՉՈՒ 3-րդ և 4-րդ կետերին համապատասխան ԳՊՀ-ում կրթության որակի գնահատման, մշտադիտարկման և բարելավման նպատակով ԳՊՀ կառավարման բարձրագույն մարմնի՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ 2017թ.-ին ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության /այժմ՝

		բաժնի/ կազմից առանձնացվեց որակի ապահովման բաժինը՝ դառնալով ռեկտորի ենթակայության ներքո գործող կառուցվածքային ստորաբաժանում: ԵՉՈՒ 6-րդ կետին համապատասխան՝ Համալսարանում կրթության որակի ներքին ապահովման գործընթացները կանոնակարգված են, ԳՊՀ կրթության որակի ապահովման ձեռնարկում հստակ ներկայացված են ԳՊՀ որակի ապահովման համակարգում ներգրավված մարմինները, այդ թվում՝ ուսանողական ինքնակառավարման մարմիններն ու ուսանողները, նախատեսված են նրանց իրավունքներն ու պարտականությունները:
2.	**Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում /մոնիթորինգ/ և պարբերական վերանայում.** **Չափորոշիչ.** Հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մշտադիտարկման համար հաստատված մեխանիզմներ: **Ուղենիշներ.** Ծրագրերի և կրթական աստիճանների որակի ապահովումը պետք է ընդգրկի՝ 1. Ակնկալվող ուսումնառության արդյունքների հրապարակումը և դրանց զարգացումը, 2. Ուսումնական պլանի և ծրագրի նախագծի ու բովանդակության հիմնարար նշանակությունը, 3. Ուսուցման տարբեր ձևերի (առկա, մասնակի բեռնվածությամբ, հեռակա, էլեկտրոնային ուսումնառություն) առանձնահատուկ կարիքների և բարձրագույն կրթության աստիճանների (գիտական, մասնագիտական և միջին մասնագիտական) սահմանում, 4. Ուսումնառության պատշաճ ռեսուրսների առկայություն, 5. Մեկ այլ մարմնի կողմից հաստատված ծրագրի հաստատման ընթացակարգերը, 6. Ուսանողների առաջընթացի և ձեռքբերումների մոնիթորինգը, 7. Ծրագրերի կանոնավոր, պարբերական վերլուծությունը, 8. Գործատուներից, աշխատանքի շուկայի ներկայացուցիչներից և այլ համապատասխան կազմակերպություններից ստացվող հետադարձ կապը, 9. Որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունը:	ԵՉՈՒ «**Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում /մոնիթորինգ/ և պարբերական վերանայում**» բաղադրիչի չափորոշչին և ուղենիշներին համապատասխան ԳՊՀ-ն մշակել է ՄԿԾ-ների որակի ապահովման կառուցակարգ, որը նախատեսում է հանրության շրջանում նոր կրթական ծրագրի իրականացման կարիքի ուսումնասիրում, ծրագրերի պլանավորում, նոր կրթական ծրագրի գործունեության արտոնման (լիցենզիայի) ստացում, ծրագրի մշակում և փաստաթղթային փաթեթի կազմում, ծրագրերի փորձաքննություն, ծրագրերի իրականացման վերահսկում, ծրագրերի գնահատում և պարբերական վերանայում: ԳՊՀ-ն, ԵՉՈՒ «**Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մշտադիտարկում /մոնիթորինգ/ և պարբերական վերանայում**» բաղադրիչի ուղենիշների 5, 6, 7, 8, 9-րդ կետերին համապատասխան, կարևորում է մասնագիտական կրթական ծրագրերի որակի վերաբերյալ բնութագրիչ տվյալների բազայի ստեղծումը, գնահատումը, բարելավումը, ըստ այդմ՝ նշված գործընթացներն իրականացնելիս ապահովում է կրթական ծրագրի որակի վերաբերյալ հաշետվությունների ներկայացում, ուսանողների, շրջանավարտների, դասախոսների, գործատուների շրջանում անցկացնում անանուն հարցումներ, ուսումնասիրում և վերլուծում հարցումների արդյունքները, քննարկում ամփոփիչ ատեստավորող հանձնաժողովների հաշվետվությունները, դասալսումների արդյունքները, ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի հետ քննարկումների արդյունքները, կրթական ծրագրերի վերաբերյալ գործատուների, արտաքին և ներքին շահառուների և շահակիցների կարծիքները, տարբեր պետությունների առաջատար բուհերում իրականացվող համանման ՄԿԾ-ների բնութագրերի ուսումնասիրման (բենչմարքինգի) և դրանց համադրման ճանապարհով իրականացված վերլուծությունները և նոր ռազմավարական ուղղությունների մշակումները, նրանց արդյունավետության ուսումնասիրությունները, որակի ներքին ապահովման շարունակական բարեփոխումներն ու բարելավումները,

		որոնք կարող են հիմք հանդիսանալ Համալսարանի ռազմավարական ծրագրի բարելավման համար:
3.	**1.3. Ուսանողների ուսումնառության գնահատում.** **Չափորոշիչ.** Ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով: **Ուղենիշներ.** Ուսանողների ուսումնառության ընթացակարգերը պետք է՝ 1. նախագծվեն սպասվելիք ուսումնառության արդյունքների և այլ ծրագրերի նպատակների ձեռքբերման չափման համար, 2. համապատասխանեն իրենց նպատակին՝ լինի դա վերլուծական, կազմիչ, թե ամփոփիչ, 3. գնահատման հստակ և հրատարակված չափանիշներ, 4. դասախոսների կողմից գնահատման դերի կարևորում, ուսանողների գիտելիքների և ակնկալվող որակավորման ձեռքբերման համար անհրաժեշտ վերջնարդյունքների առկայության հանձնաժողովային ստուգում, որտեղ որ հնարավոր է, որպեսզի չհիմնվեն առանձին քննողների դատողությունների վրա, 5. պետք է հաշվի առնել քննությունների ընթացակարգի բոլոր հնարավոր հետևանքները, 6. ուսանողի բացակայության, հիվանդության կամ այլ մեղմացուցիչ դեպքերի համար հստակ սահմանված կարգ, 7. գնահատման իրականացում հաստատության կողմից ընդունված ընթացակարգերին համապատասխան, 8. վարչական վերահսկողության իրականացում գնահատման գործընթացի օբյեկտիվությունը ստուգելու նպատակով:	ԳՊՀ-ն, ԵՉՈՒ «**Ուսանողների ուսումնառության գնահատում**» բաղադրիչի չափորոշչին համապատասխան, ունի ուսանողների ուսումնառության գնահատման հետևյալ ընթացակարգերը. 1. Գավառի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ (փոփոխություններով), 2. Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման համակարգում բակալավրի կրթական աստիճանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների գնահատման կարգ, 3. Գավառի պետական համալսարանում բակալավրի ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգ: ԵՉՈՒ «**Ուսանողների ուսումնառության գնահատում**» բաղադրիչի ուղենիշների 1, 2, 3, 7, 8-րդ կետերին համապատասխան ԳՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրառման հիմնական նպատակներն են՝ 1. ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր, 2. ընթացիկ քննությունների և գիտելիքների ստուգումման և գնահատման այլ ձևերի օգնությամբ ներմուծել ախտորոշիչ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապի ապահովման գործիք՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունավետ գնահատման հիմնական քայլերը, գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

		ԵՉՈՒ «**Ուսանողների ուսումնառության գնահատում**» բաղադրիչի ուղենիշների 5, 6-րդ կետերին համապատասխան ԳՊՀ-ում այդ գործընթացները կարգավորվում են հետևյալ ընթացակարգով. ✓ ԳՊՀ ուսանողների բողոքների և բողոքարկումների քննարկման ու լուծման կարգ (փոփոխություններով):
4.	**1.4.Դասախոսական կազմի որակի ապահովում.** **Չափորոշիչ.** Հաստատությունները պետք է համալրվեն որակյալ և բանիմաց անձնակազմով, որոնք պետք է մասնակցեն արտաքին վերլուծությանը և զեկույցների պատրաստմանը: **Ուղենիշներ.** Ուսանողների մեծամասնության համար դասախոսները ուսումնառության ապահովման և գիտելիքների միակ ամենակարևոր աղբյուրն են: Շատ կարևոր է, որ դասավանդողներն ունենան խորը մասնագիտական գիտելիքներ իրենց առարկայի վերաբերյալ, դրանք ուսանողներին արդյունավետ փոխանցելու անհրաժեշտ հմտություն ու փորձ և կարողանան ստանալ իրենց կողմից մատուցած գիտելիքների արդյունքը: Հաստատությունները պետք է ունենան աշխատանքի ընդունելու գործընթացի համապատասխան մեխանիզմներ և համոզված լինեն, որ նոր աշխատակիցներն ունեն մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտ մակարդակ: Դասախոսական անձնակազմին պետք է տրվի հնարավորություն զարգացնել և ընդլայնել իրենց դասավանդման հմտությունները, և պետք է արժևորվեն նրանց գիտելիքները: Հաստատությունները դասախոսներին պետք է անհրաժեշտ միջոցներ տրամադրեն իրենց հմտությունները պատշաճ մակարդակով խորացնելու համար և պետք է ունենան անարդյունավետ աշխատող դասախոսներին աշխատանքից հեռացնելու համապատասխան միջոցներ:	ԳՊՀ-ն, ԵՉՈՒ «**Դասախոսական կազմի որակի ապահովում**» բաղադրիչի չափորոշչին և ուղենիշներին համապատասխան, կարևորում է որակյալ և բանիմաց դասախոսների ներգրավումը և այդ գործընթացները կարգավորում է հետևյալ ընթացակարգերով. ✓ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ձևավորման և խրախուսման կանոնակարգ (փոփոխություններով), ✓ ԳՊՀ դասախոսներին պայմանագրային, համատեղության և ժամավճարային կարգով աշխատանքի ընդունման կարգ, ✓ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակների գնահատման և որակավորման բարձրացման քաղաքականության մշակման ու իրականացման ընթացակարգ, ✓ ԳՊՀ դասախոսի աշխատանքի նկարագիր, ✓ Գավառի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգ, ✓ Գավառի պետական համալսարանի սկսնակ դասախոսների և աշխատակիցների մենթորության կազմակերպման կարգ:
5.	**1.5.Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին.** **Չափորոշիչ.** Հաստատությունները պետք է ապահովեն ուսանողներին առարկայական ծրագրերով և անհրաժեշտ ռեսուրսներով: **Ուղենիշներ.** Ի լրումն դասախոսների փոխանցած գիտելիքների՝ ենթադրվում է, որ ուսանողներն իրենց ուսումնառության ընթացքում օգտվում են նաև տարբեր ռեսուրսներից, որոնք ինչպես նյութական (գրադարաններ և համակարգչային սարքավորումներ), այնպես էլ մարդկային բնույթ ունեն (անհատական դասախոսներ և խորհրդատուներ): Ուսումնառության	ԳՊՀ-ն, ելնելով Համալսարանի ՌԾ-ում ամրագրված առաքելությունից, ռազմավարական նպատակներից և առաջնորդվելով եվրոպական չափորոշչի ուղենիշներով, մշակում է ուսումնառության ռեսուրսների և ուսանողների աջակցության ծառայությունների պլանավորման, գնահատման և բարելավման իր ռազմավարությունը, որը որակի ապահովման և շարունակական բարելավման ԳՊՀ ընդհանուր քաղաքականության բաղադրիչն է: ԳՊՀ ուսանողների ուսումնառության ռեսուրսները **պլանավորելիս**՝ հաշվի են առնվում կրթական միջավայրից հիմնական շահառուների՝ ուսանողների, կարծիքները, հարցումների միջոցով կատարվում է բավարարվածության

	ռեսուրսները, այլ աջակցող մեխանիզմները պետք է մշտապես մատչելի լինեն ուսանողների համար, համապատասխան լինեն նրանց կարիքներին ու հաշվի առնեն այդ ծառայություններից օգտվողների կարծիքը: Հաստատությունները պետք է մշտադիտարկում /մոնիթորինգ/ իրականացնեն, վերլուծեն և բարելավեն իրենց ուսանողներին մատուցվող օժանդակ ծառայությունների արդյունավետությունը:	ուսումնասիրում, այնուհետև տարեկան գնումների պլանավորում: Հաջորդիվ Համալսարանը **ապահովում է** անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, **իրականացնում է** խորհրդատվություններ, աջակցման ծրագրեր: Հարցումների, դասալսումների, թիրախային /ֆոկուս/ խմբերի հետ աշխատանքների իրականացման միջոցով պարբերաբար վերանայվում, ուսումնասիրվում և վերլուծվում է ուսանողների բավարարվածության աստիճանը, վեր են հանվում նրանց կարիքները, որին հաջորդում է համապատասխան միջոցների ձեռնարկումը, շարունակական բարելավումն ու նոր ուսումնական տարվա համար նախատեսված ուսումնական ռեսուրսների պլանավորումը:
6.	**1.6.Տեղեկատվական համակարգեր.** **Չափորոշիչ.** Հաստատությունները պետք է երաշխավորեն, որ նրանք իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործողությունների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են պատշաճ տեղեկատվություն: **Ուղենիշներ.** Յուրաքանչյուր հաստատության կողմից պահանջվող որակին վերաբերող տեղեկատվական համակարգերը ինչ-որ չափով կախված են տեղային հանգամանքներից, բայց առնվազն պետք է ներառեն՝ 1. Ուսանողների առաջադիմության և հաջողության մակարդակը, 2. Շրջանավարտների՝ աշխատանքով ապահովվածությունը, 3. Ուսանողների բավարարվածությունը ծրագրերով, 4. Դասախոսների պատրաստվածությունը, 5. Ուսանողական կազմի ընդհանուր ուրվագիծը, 6. Ուսումնառության մատչելի ռեսուրսները և դրանց ծախսերը, 7. Հաստատությունների գործունեության հիմնական ցուցանիշները:	ԳՊՀ-ն, հիմք ընդունելով Համալսարանի ՌԾ-ում ամրագրված առաջնահերթությունները և եվրոպական չափորոշչի ուղենիշները, ՄԿԾ-ների որակի, դրանցում սահմանված ելքային արդյունքների, գործունեության տարբեր ուղղությունների, նպատակների, ուսանողական ինքնակառավարման մարմինների գործունեության, Համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի վերաբերյալ հանրությանը լիարժեք և պատշաճ ձևով իրազեկելու համար համացանցային տիրույթում ներկայացված է պաշտոնական կայքի (www.gsu.am), ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի (www.learn.gsu.am), ԳՊՀ էլեկտրոնային գրադարանի (www.library.gsu.am), ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի նյութերի հրապարակումների (https://publications.gsu.am), Համալսարանի միջազգային համագործակցության (www.international.gsu.am), ուսանողական (www.student.gsu.am), Համալսարան-գործատու համագործակցության, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի (www.career.gsu.am) կայքերի, youtube պաշտոնական տեսահարթակի (www.youtube.com/user/gsuadmin), սոցիալական ցանցերի (facebook, twitter) միջոցով, Համալսարանի հակակոռուպցիոն բլոգով:
7.	**1.7. Հրապարակայնություն.** **Չափորոշիչ.** Հաստատությունները պետք է մշտապես հրապարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ, անկողմնակալ տեղեկատվություն այն ծրագրերի և կրթական աստիճանների մասին, որոնք առաջարկում են: **Ուղենիշներ.** Բարձրագույն ուսումնական հաստատություններն իրենց հասարակական դերը կատարելու համար պարտավոր են տեղեկատվություն տրամադրել	ԳՊՀ-ն, ելնելով Համալսարանի ՌԾ-ում ամրագրված առաջնահերթություններից և ԵՉՈՒ «**Հրապարակայնություն**» բաղադրիչի չափորոշչից և ուղենիշներից, ԳՊՀ կրթության որակի ապահովման ձեռնարկում հստակ ներկայացրել է Համալսարանի հանրության հետ կապերի ապահովման քաղաքականությունը, որը ներառում է բուհում կրթական գործընթացի մասին հանրությանը լիարժեք իրազեկումը, տեղեկատվության տրամադրումը մասնագիտությունների, Համալսարանի կառուցվածքի և գործառույթների, ուսման վարձերի և տրամադրվող զեղչերի, ուսանողներին աջակցող հիմնադրամների, տեղեկատվություն ստանալու բոլոր հնարավոր

	իրենց կողմից առաջարկվող ծրագրերի, դրանցից ակնկալվող արդյունքների, որակավորման աստիճանների, դասավանդման ընթացքում կիրառվող ուսումնառության և գնահատման ընթացակարգերի և կրթական հնարավորությունների մասին: Տեղեկատվությունը կարող է նաև ներառել շրջանավարտների տեսակետը և աշխատանքի վայրը և ներկա ուսանողական կազմի ընդհանուր բնութագիրը: Այն պետք է լինի հավաստի, անաչառ, անկողմնակալ, մատչելի և չպետք է օգտագործվի զուտ գովազդի նպատակով:Հաստատությունը պետք է գործի վերոնշյալ սկզբունքներով:	աղբյուրների, բուհի միջազգային համագործակցության և այլ ծրագրերի վերաբերյալ: Հասարակությունը պարբերաբար իրազեկվում է Համալսարանում իրականացվող ՄԿԾ-ների, կրթության որակն ապահովող կառուցակարգերի, շնորհվող կրթական աստիճանների, արտերկրի գործընկեր բուհերի, շահառուներին հետաքրքրող այլ հարցերի մասին: Ներբուհական գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը՝ ԳՊՀ կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, այլ ներքին իրավական ակտերը, հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի և ֆակուլտետների խորհուրդների արձանագրություններն ու որոշումները հասանելի են շահառուներին թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Համալսարանի համացանցային կայքի, էլեկտրոնային փոստի միջոցով ապահովվում է ակտիվ հետադարձ կապ ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ:

Հ/Հ	ՄՈՒՀ	Համեմատության բաղադրիչը	Գավառի պետական համալսարան (ԳՊՀ)
	Կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակները		**ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակները**
1.	**Երևանի պետական համալսարան (այսուհետ՝ ԵՊՀ)**	✓ Երաշխավորել բարձր չափանիշների պահպանումը ԵՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում, ✓ ստեղծել կանոնակարգային և կազմակերպական հենք՝ ԵՊՀ-ի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, հաստատել կապ որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև, ✓ խթանել կրթության որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը Համալսարանում, ✓ հնարավորություն տալ ԵՊՀ-ին հավաստելու ինքն իրեն, իր շահեկիցներին և արտաքին գնահատողներին, որ ՈԱ որդեգրած քաղաքականությունը, համակարգը և գործընթացներն արդյունավետ են գործում,	✓ Երաշխավորել որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը ԳՊՀ առաքելությանը, ռազմավարական նպատակներին, ✓ նպաստել համալսարանում կրթության որակի ապահովման քաղաքականության հետևողական իրականացմանը, որակի մշակույթի ամրապնդմանը և շարունակական զարգացմանը, ✓ աջակցել որակի կառավարման, ապահովման և բարելավման գործընթացներում շահակիցների դերակատարության բարձրացմանը:

		✓ ապահովել կրթության որակի վերաբերյալ ԵՊՀ հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների, հիմնադրի (Կառավարության) և ֆինանսավորող այլ կազմակերպությունների առջև, ✓ օժանդակել ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների և համալսարանների հետ կապերի ամրապնդմանը[1]:	
2.	**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան** (այսուհետ՝ ՃՇՀԱՀ)	✓ Պահպանել ՃՇՀԱՀ-ի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների համար սահմանված կրթական չափորոշիչները, ✓ ապահովել կրթության որակի համար ՃՇՀԱՀ-ի հաշվետվողականությունը ուսանողների, գործատուների, հիմնադիրների և ֆինանսավորող այլ կազմակերպությունների հանդեպ, ✓ ստեղծել մեթոդական և կազմակերպական հիմք՝ ՃՇՀԱՀ-ի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար, ✓ խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը ՃՇՀԱՀ-ում, ✓ նպաստել ՃՇՀԱՀ-ի առաքելության իրականացմանը՝ նրա սահմանած տեսլականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան:[2]:	
3.	**Շվեդիայի Լիննեուս համալսարան**	***The aim of the quality work is to support the university's mission, to carry out education and research in collaboration***	

[1] ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկ, Երևան, 2013, էջ 15:
[2] ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկ, Երևան, 2013, էջ 15:
ընթացներին ուսանողների ներգրավման ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, 2017, էջ 44-45:

		with and to the benefit of the surrounding society, in accordance with Linnaeus University's vision[3]. Լիննեուսի համալսարանի Որակի ապահովման բաժնի նպատակն է նպաստել համալսարանի առաքելության իրականացմանը, կրթություն և հետազոտություն իրականացնել համալսարանական հասարակության համագործակցությամբ և ի շահ նրանց:	
	Կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները		**ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները**
1.	**Երևանի պետական համալսարան**	✓ Համակարգված գործընթացների միջոցով աջակցել կրթական չափորոշիչների պահպանմանը, կրթական ծրագրերի ՈԱ-ը և շարունակական բարելավմանը, ✓ ստեղծել պայմաններ՝ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և արտաքին գնահատումն ու հավատարմագրումը իրականացնելու համար, ✓ ՈԱ համար նախատեսել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ, ✓ ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը, ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար, ✓ ապահովել, որ ԵՊՀ կրթական ծրագրերի որակը բավարարի բոլոր շահեկիցների ակնկալիքները, իսկ ԵՊՀ	✓ Նպաստել ՄԿԾ-ների մշակման, քննարկման, հաստատման, մշտադիտարկման, վերանայման և բարելավման ընթացակարգերի կիրառման որակի ապահովմանը, ✓ ներդաշնակել համալսարանի որակի ապահովման տարբեր ոլորտների գործունեության և գործառույթների իրականացման գործընթացները, ✓ որակի ապահովման ճկուն մեխանիզմների կիրառմամբ նպաստել համալսարանում ԵԲԿՏ որակի չափանիշների ներդրմանը, ✓ ամրապնդել կապերը գործընկեր ՀՀ և եվրոպական բուհերի ՈԱ բաժինների, այլ ստորաբաժանումների, ՀՀ ՈԱԱԿ-ի հետ, ✓ բացահայտել ԳՊՀ որակի ապահովման ներքին համակարգի ուժեղ և թույլ կողմերը, մշակել միջնաժամկետ և երկարաժամկետ բարելավման ծրագրեր, ✓ ՈԱ բոլոր գործընթացների համար ապահովել պլանավորման, իրականացման, գնահատման կամ ստուգման, բարելավման գործիքները՝ «<u>ՊԻԳԲ»</u> կամ «<u>Դեմինգի շրջափուլը /ցիկլը/»</u>, որն իր հերթին կապահովի հետադարձ կապեր :

[3]Linnaeus University's quality policy https://lnu.se/globalassets/dokument---gemensamma/universitetsledningens-kansli/kvalitetsarbete/lnu-kvalitetspolicy-en-2020-06-09-wcag.pdf

		շրջանավարտները ձեռք բերեն գիտելիքներ և հմտություններ, որոնք պահանջարկված են աշխատաշուկայում[4]:	
2.	**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան**	✓ Ապահովել կրթական ծրագրերի պատշաճ մշակումը, հաստատումը, ընթացիկ մշտադիտարկումը, պարբերական վերանայումն ու շարունակական բարելավումը՝ որակի ապահովման սահմանված ընթացակարգերի համապատասխան, ✓ կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին գնահատումն ու հավատարմագրումն իրականացնելու համար ստեղծել պայմաններ, ✓ որակի ապահովման համար ստեղծել հաշվետվողականության ընթացակարգեր և նախաձեռնել համապատասխան գործընթացներ, ✓ ապահովել որակի ներքին ապահովման ընթացակարգերի և գործընթացների թափանցիկությունը, ✓ դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատու- ների և արտաքին փորձագետների մասնակցությունը, ✓ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ, ✓ ուսանողների համար ստեղծել ուսումնառության պատշաճ հնարավորություններ՝ կրթական ծրագրերից ակնկալվող վերջնարդյունքները հաջողությամբ ձեռք բերելու համար, ✓ երաշխավորել որակի ներքին ապահովման քաղաքականության և ռազմավարության	

[4] ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկ, Երևան, 2013, էջ 16:

		համապատասխանությունը ՃՇՀԱՀ-ի տեսլականին, առաքելությանը և ռազմավարական նպատակներին[5]:	
3.	**Շվեդիայի Լիննեուս համալսարան**	***The objective of the quality work is to contribute to development and quality-assurance within education and research as well as within the university administration with the support of a developmentoriented quality culture that encompasses both students and members of staff. The quality policy describes Linnaeus University's values and ways of working with the systematic quality work through established objectives and processes. The policy also describes how the quality work is linked together with the operational process in order to realise the university's vision and strategy and to guarantee the processes for quality-assurance and development of our operations. The operational process is the university's combined process for operational planning and follow-up, which also includes internal steering and control[6].*** Որակի ապահովման բաժնի խնդիրն է նպաստել կրթության և հետազոտությունների, ինչպես նաև համալսարանի վարչակազմի շրջանում որակի ապահովմանը և զարգացմանը՝ զարգացման աճ երաշխավորող որակի մշակույթի միջոցով, որը ներառում է ինչպես ուսանողներին, այնպես էլ աշխատակազմի անդամներին: Որակի քաղաքականությունը նկարագրում է Լիննեուսի համալսարանի արժեքներն ու աշխատանքի եղանակները, համակարգված աշխատանքի ձևերը `ամրագրված նպատակների և գործընթացների միջոցով: Քաղաքականությունը նաև նկարագրում է, թե ինչպես է	

[5] ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման ձեռնարկ (բուհի կրթության որակի ապահովման և այդ գործընթացներին ուսանողների ներգրավման ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, 2017, էջ 45-46:
[6]Linnaeus University's quality policy
https://lnu.se/globalassets/dokument---gemensamma/universitetsledningens-kansli/kvalitetsarbete/lnu-kvalitetspolicy-en-2020-06-09-wcag.pdf

		որակի աշխատանքը կապված գործառնական գործընթացի հետ `համալսարանի տեսլականն ու ռազմավարությունն իրականացնելու և մեր գործունեության որակի ապահովման և զարգացման գործընթացները երաշխավորելու համար: Դա ենթադրում է համալսարանի գործառական պլանավորման և հետևողականության համակցված գործընթաց, որը ներառում է նաև ներքին ղեկավարում և վերահսկում:	
Որակի ապահովման գործընթաց			**ԳՊՀ կրթության որակի ապահովման գործընթաց**
1.	**Երևանի պետական համալսարան**	ԵՊՀ որակի շարունակական բարձրացման մեխանիզմը հիմնված է շրջափուլային մի գործընթացի վրա, որը բաղկացած է հետևյալ չորս հիմնական փուլերից՝ 1. Պլանավորում. սահմանվում են հիմնական խնդիրները և չափելի ակնկալվող վերջնարդյունքները: 2. Իրականացում. կատարվում են ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը նպատակաուղղված բոլոր անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները: 3. Գնահատում. ստուգվում և չափվում են փաստացի ստացված արդյունքները սպասվածի համեմատությամբ **4.** Բարելավում. մշակվում և պլանավորվում են լրացուցիչ միջոցառումներ՝ բացթողումները և թերացումները շտկելու և նախանշված	**Պլանավորում.** ✓ Ներքին շահառուների և արտաքին շահակիցների կարիքների վերհանում, ուսումնասիրում, ✓ կրթական գործունեությունը կարգավորող պատշաճ ընթացակարգերի և կանոնակարգերի ստեղծում, ✓ ԳՊՀ որակի ապահովման գործընթացների ծրագրում, հետադարձ կապի մեխանիզմների մշակում, ✓ ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների հստակ գործառույթների և աշխատանքային նկարագրերի սահմանում: ✓ ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ ցուցիչների սահմանում, ✓ ԳՊՀ բոլոր ստորաբաժանումների գործունեության արդյունավետության ցուցիչների մշակում,

		վերջնարդյունքներն իրականացման հաջորդ փուլում ձեռք բերելու համար[7]:	**Իրականացում.** ✓ ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսումնաօժանդակ կազմի հավաքագրում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում, ✓ անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների՝ լաբորատորիաների, համակարգչային, երաժշտության լսարանների սարքավորումների, ուսումնամեթոդական և տեղեկատվական ռեսուրսների ապահովում, ✓ փաստաթղթաշրջանառության պատշաճ ապահովում, ✓ ՈԱ համապատասխան վերլուծությունների կատարում: **Գնահատում.** ✓ կրթական ծառայությունների մատուցման ընթացքի վերահսկում, ✓ ներքին շահառուների և արտաքին շահակցների շրջանում բավարարվածության հարցումների անցկացում, ✓ մշտադիտարկում, հաշվետվությունների ներկայացում, վերլուծությունների հրապարակում: **Բարելավում.** ✓ Ռազմավարական ուղղությունների գործողությունների իրականացման արդյունավետության ուսումնասիրություն, մշտադիտարկում, գնահատում, ✓ բարելավման նոր հայեցակարգերի մշակում:
2.	**Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան**	ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման հիմնական գործընթացները. Սահմանված կրթական չափորոշիչների պահպանում. Կրթական ծրագրերի որակի ապահովում, Կրթական ծրագրերի որակի ապահովման համակարգը սահմանում է, Վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակում, Ուսանողների գնահատում, ✓ Պրոֆեսորադասախոսական կազմի որակի ապահովում, ✓ Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների գնահատում[8]:	
3.	**Շվեդիայի Լիննեուս համալսարան**	***The quality-assurance process involves development and control of quality as well as promotion, further development and spread of good examples. Each part of our operations has its respective objectives as basis for the quality-assurance process. This can be described through four substeps, Linnaeus University's quality wheel.*** ***1. Assessment in relation to objectives*** ***2. Analysis and identification of insufficient quality and good examples respectively*** ***3. Prioritisation and implementation of measures in relation to identified insufficient quality and spread of good examples*** ***4. Follow-up of implemented measures The analysis (substep 2) is carried out in relation to objectives and when needed the objectives are revised.***	

[7]ԵՊՀ որակի ապահովման և շարունակական բարելավման ձեռնարկ, Երևան, 2013, էջ 30:

[8] ՃՇՀԱՀ-ի որակի ապահովման ձեռնարկ (բուհի կրթության որակի ապահովման և այդ գործընթացներին ուսանողների ներգրավման ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, 2017, էջ 44-53:

		As for prioritised measures (substep 3), this includes also how the follow-up should be carried out. A measure can also be preventive in order to minimise the risk of insufficient quality. The documentation of the qualityassurance must be readily available. Որակի ապահովման գործընթացը ներառում է որակի մշակում և վերահսկում, ինչպես նաև լավ օրինակների մշակում, հետագա զարգացում և տարածում: Մեր գործողությունների յուրաքանչյուր մաս ունի իր համապատասխան նպատակները՝ որպես որակի ապահովման գործընթացի հիմք: Սա կարելի է նկարագրել չորս ենթակետերի՝ Լիննեուս համալսարանի որակի անիվի միջոցով: 1. Գնահատում՝ կապված նպատակների հետ 2. Համապատասխանաբար անբավարար որակի և լավ օրինակների վերլուծություն և նույնականացում 3. Սահմանված անբավարար որակի և լավ օրինակների տարածման հետ կապված չափանիշների առաջնահերթության ապահովում և իրականացում 4. Իրականացված չափանիշների վերահսկում: Վերլուծությունը (ենթաբաժին 2) իրականացվում է ըստ նպատակների, և, անհրաժեշտության դեպքում, նպատակները վերանայվում են: Ինչ վերաբերում է առաջնայնություն տրված չափանիշներին (3-րդ ենթաբաժին), սա նաև ներառում է այն, թե ինչպես պետք է իրականացվի վերահսկողությունը: Չափանիշը կարող է նաև կանխարգելիչ լինել՝անբավարար որակի ռիսկը նվազագույնի հասցնելու համար: Որակի ապահովման փաստաթղթերը պետք է մատչելի լինեն:	

Ներկայացված 3 տարբեր բուհերի կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակներն ուսումնասիրելով և դևանք համեմատական վերլուծության ենթարկելով՝ կարող ենք եզրակացնել, որ գրեթե բոլոր բուհերի, բացառությամբ ԵՊՀ-ի, կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակները սահմանելիս կարևորվել է բուհի կողմից որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության համապատասխանությունը բուհի առաքելությանը, ռազմավարական նպատակներին։ «Կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակներ» հատվածում երկրորդ կարևոր կետը բոլոր բուհերի մոտ նշված է կրթության որակի շարունակական բարելավման խթանումը և որակի մշակույթի զարգացումը, ինչպես նաև հաշվետվողականությունը ներքին շահառուների և արտաքին շահակիցների առաջ։

Ամփոփելով երեք առաջատար բուհերի կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակների ուսումնասիրությունը՝ կարող ենք հավաստել, որ ինչպես ՃՇՀԱՀ-ում և Շվեդիայի Լիննեուս համալսարանում, այնպես էլ ԳՊՀ-ում հստակ սահմանված է, որ որակի ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը համապատասխանում է ԳՊՀ առաքելությանը, ռազմավարական նպատակներին։ Ինչպես ԵՊՀ-ն և ՃՇՀԱՀ-ը, այնպես էլ ԳՊՀ-ն հետամուտ է կրթության որակի ապահովման քաղաքականության հետևողական իրականացմանը, որակի մշակույթի ամրապնդմանը և շարունակական զարգացմանը։ Ինչպես Շվեդիայի Լիննեուս համալսարանում, այնպես էլ ԳՊՀ-ում որակի կառավարման, ապահովման և բարելավման գործընթացներում առաջնային են համարվում շահակիցների կարծիքներն ու նրանց դերակատարությունը։

Կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակները սահմանելիս՝ ԳՊՀ-ում կրթության որակի վերաբերյալ հաշվետվողականությունը ներքին շահառուների և արտաքին շահակիցների հանդեպ առանձին կետով չի սահմանվել, քանի որ ԳՊՀ-ում որակի ապահովման քաղաքականությունը և ռազմավարությունը համապատասխանում են ԳՊՀ առաքելությանը, ռազմավարական նպատակներին, որտեղ առաջնահերթություններից մեկն է համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության բարձրացումը, հանրությանը որակյալ ծառայությունների մատուցումը, գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, այսինքն՝ ԳՊՀ-ում դա արված է միջնորդավորված ձևով։

Երեք առաջատար բուհերի կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները համեմատելիս՝ ակնհայտ է դառնում, որ գրեթե բոլոր բուհերի, բացառությամբ Շվեդիայի Լիննեուս համալսարանի, կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները սահմանելիս առաջնային է համարվել կրթական ծրագրերի ՈԱ-ը և շարունակական բարելավումը, անհրաժեշտ պայմանների առկայությունը՝ կրթական ծրագրերի որակի ինքնագնահատումը և արտաքին գնահատումն ու հավատարմագրումը իրականացնելու համար, ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների և շրջանավարտների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների գործուն մասնակցությունը, անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը և խթանող մեխանիզմների տրամադրումը կրթության որակի շարունակական բարելավման համար։

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրակացնել, որ Գավառի պետական համալսարանը կրթության որակի ապահովման քաղաքականության խնդիրները սահմանելիս առաջնահերթություն է համարել ՄԿԾ-ների մշակման, քննարկման, հաստատման, մշտադիտարկման, վերանայման և բարելավման ընթացակարգերի կիրառման որակի ապահովումը, Համալսարանի որակի ապահովման տարբեր ոլորտների գործունեության ներդաշնակությունը, որակի ապահովման ճկուն մեխանիզմների կիրառմամբ Համալսարանում ԵԲԿՏ որակի չափանիշների ներդրումը, ԳՊՀ որակի ապահովման ներքին համակարգի ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, միջնաժամկետ և երկարաժամկետ բարելավման ծրագրերի մշակումը, ինչպես նաև, Շվեդիայի Լիննեուս համալսարանի օրինակով, ՈԱ բոլոր գործընթացների համար պլանավորման, իրականացման, գնահատման կամ ստուգման, բարելավման գործիքների ապահովումը՝ «ՊԻԳԲ» կամ «Դեմինգի շրջափուլի /ցիկլի/» օրինակով, որն իր հերթին ապահովում է հետադարձ կապեր։

Համեմատվող երեք առաջատար բուհերի Որակի ապահովման ձեռնարկներում հստակ նկարագրված են որակի ապահովման գործընթացները։ ԵՊՀ-ի և Շվեդիայի Լիննեուս համալսարանի ձեռնարկներում այն ներկայացված է ըստ ՊԻԳԲ շրջափուլի, իսկ ՃՇՀԱՀ-ի ձեռնարկում այն ներկայացված է ՊԻԳԲ շրջափուլի միայն իրականացում և գնահատում բաղադրիչներով։

Ուսումնասիրելով և համեմատելով երեք բուհերի որակի ապահովման գործընթացները, հաշվի առնելով բուհի առանձնահատկությունները՝ ԳՊՀ-ը կրթության որակի ապահովման գործընթացները նկարագրելիս հիմք է ընդունել դարձյալ ՊԻԳԲ շրջափուլը։